Քանի որ Լարք Երաժշտանոցը անընդհատ համալրւում է նորանոր ուսանողներով, յարմար ենք գտնում կրկին անգամ ծանօթացնել բոլորին մեր կրթական համակարգի հետ:

Իւրաքանչիւր ուսանող, բացի մասնագիտական դասից (դաշնամուր, ջութակ, գիթառ, թաւջութակ, սրինգ, ձայնամարզութիւն) մասնակցելու է նաեւ տեսական առարկաների դասընթացքներին (Տեսութիւն, Երգընթերցում, Ներդաշնակագիտութիւն, Երաժշտութեան պատմութիւն, Հայ Երաժշտութեան Պատմութիւն, Մեղեդիակերտ եւ Դաշնեակակերտ Բազմաձայնութիւն, Երաժշտական Ձեւ եւ Կառոյց, եւայլն). ինչպէս նաեւ անսամբլային կատարողական դասերին՝ (Երգչախումբ, Ձեռնա-զանգակների եւ հարուածային գործիքների նուագախումբ, Unison ջութակահարների համոյթ, սենեկային երաժշտութեան դասարան):

Քաջալերում ենք իւրաքանչիւր ուսանողի, որպէսզի ըստ պատշաճի հետեւի այս դասընթացքներին:

Ստորեւ, հաղորդում ենք Լարք Երաժշտանոցի ներքին կեանքից որոշ տեղեկութիւններ:

1. Քննութիւններ (մասնագիտական եւ տեսական դասեր)

Ուսանողի երաժշտա-իմացական գիտելիքները ստուգելու նպատակով տարին չորս անգամ կազմակերպւում են քննութիւններ մանկավարժներից կազմուած դատական կազմերի մասնակցութեամբ:

Քննութիւնների ժամանակացոյցի հետ կարող էք ծանօթանալ գրքոյկի էջերում:

2. Լարք երաժշտանոցի ներքին միջոցառումներ

ա) Ամենամսեայ ուսանողական ներքին համերգներ

Ներքին համերգները արդէն աւանդոյթ են դարձել Լարքում: Իւրաքանչիւր ամսուայ առաջին Ուրբաթ օրը երաժշտանոցի Դրբանճեան սրահում, երեկոյեան ժամը 8:00-ին կը կազմակերպուի ուսանողական համերգ: Ուսանողները համերգին մասնակցելու համար կարող են արձանագրուել նախօրօք, մինչեւ նախորդ ամսուայ վերջին Շաբաթ օրը, իրենց դասախօսների համաձայնութեամբ:

Այս միջոցառման նպատակն է հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր ուսանողի տարուայ ընթացքում ցուցաբերելու իր ընդունակութիւններն ու հնարաւորութիւնները մասնագիտական դասարաններում, եւ միաժամանակ՝ մշակելու համարձակութիւն եւ ինքնադրսեւորման վարպետութիւն:

բ) Ամավերջի հաշուետու համերգ

Իւրաքանչիւր տարուայ վերջում կը կազմակերպուի տարեկան հաշուետու համերգ, որին կը մասնակցեն մասնագիտական դասարաններից 96 կամ աւելի միաւոր արձանագրած ուսանողները, ինչպէս նաեւ Լարքի կատարողական դասարանների կազմերը:

գ) Շրջանաւարտների համերգ

Ուսումնական տարուայ վերջում կազմակերպւում է շրջանաւարտների համերգ: Այստեղ վկայական են ստանում միջնակարգ ընթացքը աւարտողները եւ Լարքի դիպլոմին են արժանանում տասնամեայ ընթացքը աւարտող ուսանողները: Վերջիններին հնարաւորութիւն է տրւում ելոյթ ունենալ նուագախմբի հետ: Շրջանաւարտ ուսանողները պէտք է լրացրած լինեն նաեւ այն բոլոր տեսական դասընթացքները, որոնք պահանջւում են իրենցից ըստ Լարքի կրթական ծրագրի: